ԱՐԴԻ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԵՎ ԼԵՆԻՆԻԶՄԸ

Հ. Գ. ԱՍԼԱՆՅԱՆ

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր

Երկու սոցիալ-տնտեսական սիստեմների, առաջադեմ և ռեակցիոն ուժերի ժամանակակից սուր պայքարում առանձնահատուկ տեղ է գրավում գաղափարախոսության ոլորտը։ ՍՄԿԿ և միջազգային կոմունիզմի փաստաթղթերում, Կոմունիստական ու բանվորական կուսակցությունների մոսկովյան պատմական խորհրդակցության (1969 թ.) որոշումներում, Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակի առթիվ ՍՄԿԿ Կենտկոմի հրատարակած թեզիսներում, գիտականորեն ու բազմակողմանի բացահայտված են իմպերիալիզմի քաղաքական ու գաղափարախոսական դիվերսիաների ակտիվացման պատճառները, մեթոդները, ձևերն ու նպատակները, վերլուծված են մեր դարաշրջանի հասարակական պրոցեսների բովանդակությունն ու տենդենցները, վեր են հանված ժամանակակից իմպերիալիզմի առանձնահատկությունները, բնորոշված է ուժերի հարաբերակցությունը համաշխարհային ասպարեզում, բնութագրված է իմպերիալիզմի ստրատեգիան ու տակտիկան ներկա պայմաններում։ Այդ ստրատեգիայի էական մասը ներկայումս գաղափարախոսական-քաղաքական արշավանքն է կոմունիզմի, մարքսիզմ-լենինիզմի դեմ։ Դա համատարած, իսկական գլոբալ արշավանք է համաշխարհային մասշտաբով սոցիալիստական սիստեմի, կոմունիստական շարժման, բոլոր պրոգրեսիվ ուժերի դեմ։ Գաղափարական մարտերի աննախընթաց սրումը հասկանալու համար պետք է հաշվի առնել հետևյալ գործոնների դերը.

1) Համաշխարհային սոցիալիստական սիստեմի անժխտելի առավելությունները ու հաստատուն առաջխաղացումը.

2) Միջազգային բանվորական շարժման հսկայական մասսայական ծավալը, տնտեսական ու քաղաքական պայքարի միասնությունը.

3) Ազգային-ազատագրական շարժումների հաջողությունները Ասիայի, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի երկրներում (այդ շարժումը որոշ երկրներում ընդունել է բացահայտ հակակապիտալիստական բովանդակություն).

4) Իմպերիալիզմի մի շարք ռազմա-քաղաքական ավանտյուրաների ձախողումները.

5) Մարքսիզմ-լենինիզմի լայնածավալ տարածումը։

Միևնույն ժամանակ կոմունիստական կուսակցությունները զգուշացնում են առաջադեմ մարդկությանը իմպերիալիզմի ուժերի ու հնարավորությունների թերագնահատումից, իմպերիալիզմ, որը ժողովուրդների ազատության, առաջադիմության ու խաղաղության լուրջ ու վտանգավոր թշնամին է (և ոչ թե «թղթե վագր»)։ Նրա վտանգավորությունն այն է, որ նա տենդենց ունի ավելի նպատակներով օգտագործել գիտության ու տեխնիկայի վիթխարի նվաճումները։ Այդ տենդենցը, ինչպես վաղուց զգուշացրել է Լենինը, կարող է հան-

դեցնել մարդկության գոյության բուն պայմանների ոչնչացման։ Եվ դա ռեալ վտանգ է։

Հակակոմունիզմ — այս է իմպերիալիզմի քաղաքական-գաղափարախոսական ստրատեգիայի հիմնական գիծը, ինչպես դա եղել է և անցյալում։ Ժամանակակից պայմաններում, սակայն, հակակոմունիզմը հսկայական մասշտաբների է հասել։ Այդ գիծը երկրորդ համաշխարհային պատերազմից հետո մշակվում է իմպերիալիզմի ստրատեգիական կենտրոններում (ԱՄՆ, ԳՖՀ)։

Բացարձակ զրպարտանքներ ու գաղափարախոսական դիվերսիաներ, փաստերի, իրադարձությունների, կոմունիստական իդեալների մոլեռանդ կեղծում, մասսայական ինֆորմացիայի բոլոր միջոցների (մամուլ, ռադիո, հեռուստատեսություն) չարաշահում։ Այս «գործով» է զբաղված բուրժուական գաղափարախոսների և ռևիզիոնիստների մի ամբողջ բանակ, որը չեխական ճգնաժամի օրերին անզուսպ ցինիկությամբ դրսևորեց իր հակասոցիալիստական և, իհարկե, հակասովետական որոգայթները։ Չեխական դեպքերի թեժ պահին բուն «գործունեություն» ծավալեց ՆԱՏՕ-ի գործակալների, ագրեսիվ պատերազմի հրձիգների բաղմամարդ ոհմակը՝ Բոննի գեներալ Մոյլը, որը Համբուրգում կարդացած իր ուսանշիստական դասախոսության մեջ հանձնարարում էր ուսումնասիրել ռեգիոնալ պատերազմի հարցը Եվրոպայի գլխավոր ճակատում, այսինքն այնտեղ, որտեղ համաշխարհային տերություններն անմիջաբար շփվում են միմյանց հետ, Շպրինգերի լրագրային կոնցեռնը, միլիոնատեր Մոլդենի հրատարակչությունը, պրոֆեսոր Մեներտը (այդ բոլորը ԳՖՀ-ում), մոլի հակակոմունիստ Զ. Բժեզինսկին (ԱՄՆ), անգլիական «Գարդիան» թերթի մեկնաբան Զորզեն։ Առանձին ակտիվությամբ են գործում «Ամերիկայի ձայնը», «Բիբիսին», «Գերմանական ալիքը», «Սվոբոդա» և եթերը թունավորող այլ ալիքներ։

Հակակոմունիզմի ստրատեգիան ելնում է այն խոր մոլորությունից (եթե միայն մոլորություն է դա), թե կոմունիզմը առասպել է։ «Կոմունիստական բոլոր առասպելներից,— ծիծաղելի հավակնությամբ աղդարարում է Լոնդոնի պրոֆեսոր Սետոն-Ուոտսոնը,— ոչ մեկն այնքան անհեթեթ չէ, որքան։ կոմունիզմի պատմական անխուսափելիության ու անհրաժեշտության վերաբերյալ միտքը»[1]։ Կոմունիզմը առասպել հայտարարելով, նրա մոլեռանդ թշնամիները ի՞նչ պրակտիկ դեղատոմս են առաջարկում իրենց գործակալներին։ Սոցիալիստական երկրների դեմ հակահեղափոխական դավադրություններ կազմակերպող ու հրահրող այդ գործակալները դիրեկտիվներ են ստանում ամեն կերպ խրախուսել «լիբերալացման տենդենցներն» այդ երկրներում՝ հուսալով, թե դրա հետևանքով «արևմուտքից խմորման ավելի ու ավելի շատ ֆերմենտներ պետք է թափանցեն սոցիալիստական երկրները»։ Սրանք Ջորջթաունի ստրատեգիական կենտրոնի (ԱՄՆ) դիրեկտիվներն են։

Պատմության դասերն անտեսելով, նրանք շարունակում են իրենց հին ստրատեգիան, բաղմապատկում են տակտիկական պրիոմները։ «Ամերիկայի ապագա ստրատեգիայի առաջնահերթ և ամենակարևոր խնդիրը, բառի լայն իմաստով, մեր քաղաքական սիստեմի պահպանումն ու ամրապնդումն է, և

[1] H. Seton-Watson. From Lenin to Malenkov. The History of World Communism. 1955, № 4. p. 347—348.

այս խնդիրն ավելի կարևոր է, քան խաղաղության պահպանումը»[2],— դրում են մի խումբ հրապարակախոսներ։ Եվ, պատկերը լրացնելու համար, երկու էջ հետո իրենց թեզն ավարտում են այսպես. «Մեր քաղաքականության հիմքը պետք է կազմի հետևյալ նախադրյալը. մենք չենք կարող հանդուրժել, որ գոյություն ունենա մեր քաղաքական սիստեմին հակառակ սիստեմ»[3]։ Այս քաղվածքներից պարզ է նաև, որ սոցիալիզմի, խաղաղության ու դեմոկրատիայի թշնամիներն ամեն րոպե, երբ հարմար գտնեն, պատրաստ են ոտնահարելու խաղաղության գործը։ Եվ մենք գիտենք, որ դրանք լոկ խոսքեր չեն։ Սոցիալիզմի թշնամիները մի անգամ չէ, որ փորձ են արել խոսքից գործի անցնելու, երկրի երեսից զենքի միջոցով բնաջնջելու իրենց «քաղաքական սիստեմին հակառակ սիստեմը»՝ 1918—1920 թթ. ինտերվենցիայից սկսած մինչև Հիտլերյան ֆաշիզմի ավազակային հարձակումը մեր երկրի վրա։ Պատմությանը հայտնի է նաև, որ այդ արշավանքները ջախջախիչ հակահարված են ստացել սովետական ժողովրդի և նրա հերոս բանակի կողմից։

Այստեղից պարզ է, թե ինչու ներկայումս հակակոմունիզմը հսկայական ջանքեր է թափում գաղափարախոսական դիվերսիաներ կազմակերպելու համար։ Սոցիալիզմի թշնամիներն, այնուամենայնիվ, պատմությունից որոշ դասեր առել են. ակներև է, որ ուղղակի ռազմական մեթոդներով սոցիալիստական սիստեմը խորտակելու հույսերը պատրանք դուրս եկան։ Սակայն, թշնամիները հրապարակից չեն հեռանում և սուրը պատյանի մեջ չեն դնում. նրանք դիմում են պայքարի առավել խարդախ մեթոդների, որոնում են նորանոր փաստարկումներ, մոգոնում են մոդայական փիլիսոփայական, սոցիալ-պատմական առասպելներ, կոնցեպցիաներ, սիստեմներ։ Հակակոմունիզմի գաղափարախոսական դիվերսիաների այդ առանձնահատկությունը կոմունիստների մոսկովյան խորհրդակցությունում լավ է բնորոշել Լ. Ի. Բրեժնևը. «Իմպերիալիզմը,— ասաց նա,— չի կարող հաջողության հույս ունենալ, բացահայտորեն ազդարարելով իր իսկական նպատակները։ Նա ստիպված է մոգոնել գաղափարախոսական առասպելների մի ամբողջ սիստեմ, որոնք մշուշապատում են նրա մտադրությունների իսկական իմաստը, թմրեցնում են ժողովուրդների զգոնությունը։ Այդ նպատակով նա այժմ ստեղծել է պրոպագանդիստական մի հսկայական մեքենա, որն օգտագործում է գաղափարախոսական ներգործության ժամանակակից բոլոր միջոցները»։ Եվ ահա այդ մեքենան գործի դնողները ջանում են հազար ու մի մեթոդներով, «հոգեբանական նուրբ ձևերով» սոցիալիստական երկրները ներմուծել հակակոմունիզմի թույնը։

Սոցիալիստական աշխարհի, դեմոկրատական երկրների ու առաջադիմական շարժումների դեմ գաղափարախոսական դիվերսիաների դիմելով, մոնոպոլիաների վարձկաններն իրենց տերերից հրահանգներ են ստանում գործադրել պայքարի ամենաայլազան ձևեր, կանգ չառնել միջոցների առաջ, զեկավարվելով եզուիտների նշանաբանով՝ «Նպատակն արդարացնում է միջոցները»։

Դրա հետ միասին հակակոմունիզմի մարտնչող մունետիկները հույսեր են կապում, այսպես կոչված, հոգեբանական պատերազմի հետ։ Տխրահռչակ Շարաուսը դիրեկտիվներ է տալիս իր ընթերցողներին. «Հարկավոր է մեր

---

[2] R. Strausz—Hupé, W. Kintner, S. Posony. A. Forward Strategy for Armenica 1961, № 4, n. 402.

[3] Նույն տեղում, էջ 405—406։

մտահայակերպը հոգեբանական նուրբ ձևով, ժամանակակից պրոպագանդայի բոլոր միջոցներով ներարկել կոմունիստական պետությունների հասարակական կյանքը»[4]։ Մյուս ոևանշիստը, Բոննի նախկին մինիստր Օբերլենդերը, տեսե՛ք, հոգեբանական պատերազմի ինչ խրատներ է տալիս իր ընթերցողներին և ունկնդիրներին. «Այդ պատերազմը,— ասում է նա,— հստակ արտահայտված սկիզբ չունի։ Այն չի հայտարարվում, ինչպես հայտարարվում է սովորական պատերազմը։ Ընդհակառակը, այն մղվում է գրեթե անտեսանելի, պրոպագանդայի օգնությամբ, իդեաների ինֆիլտրացիայի, լրտեսության միջոցով։ Եվ որքան աննկատելի է մղվում, որքան քիչ ուժեր է իր դեմ հարուցում, այնքան տվելի արդյունավետ է այդ պատերազմը»[5]։

Գործադրվում են բոլոր միջոցները սոցիալիստական սիստեմի տնտեսական ու քաղաքական հիմքերը խարխլելու, սոցիալիստական հանրակեցության բարձր նորմաները՝ կոլեկտիվիզմը, հեղափոխական հումանիզմը, ժողովուրդների աղաստության ու բարեկամության ազնիվ սկզբունքները, հայրենասիրությունն ու սոցիալիստական ինտերնացիոնալիզմը հերքելու և վարկաբեկելու նպատակով։

Սոցիալիզմի անդիմակ թշնամիները հենց շեմքից մերժում են դիալեկտիկա-մատերիալիստական աշխարհայացքն ու մեթոդոլոգիան, լենինիզմի քաղաքական, ծրագրային ու տակտիկական սկզբունքներն ու դրույթները, դրանք հայտարարում են հնացած։

Մարքսիզմ-լենինիզմի ավելի զգաստ հակառակորդները ստիպված են խոստովանել նրա դիտական ու պատմական արժանիքները, ուժն ու ազդեցությունը միլիոնավոր մարդկանց վրա։ Նրանք փորձում են օբյեկտիվ գունավորում տալ իրենց հակասոցիալիստական հայացքներին ու պրոպագանդային, նպատակ ունենալով համոզիչ դարձնել իրենց փաստարկումները և մարքսիզմը հարմարեցնել իրենց մտադրություններին։ Նրանք նույնիսկ քննադատական սուսեր են ճոճում բուրժուական որոշ, հատկապես աջ ծակող դոգմաների դեմ, միևնույն ժամանակ թարս ու շիտակ մեկնաբանելով և աղավաղելով Մարքսի ու Լենինի ուսմունքը, սոցիալիստական պետությունների նպատակներն ու քաղաքականությունը։

Կոմունիզմի անկասելի, հաստատուն առաջխաղացման փաստը թափանցել է նույնիսկ նրա հակառակորդներից շատերի գիտակցության մեջ՝ առաջացնելով մտքերի տարընթացություն, իրարանցում, հոգեկան կաթված[6]։ Հրապարակ են եկել հարկադրված խոստովանությունների ամբողջ սերիաներ մարքսիզմ-լենինիզմի «ճանաչման» մասին, այն մասին, թե չի կարելի այդ ուսմունքը շեմքից դեն նետել, այն պետք է ավելի լուրջ ուսումնասիրել և ավելի հիմնավորված քննադատել։ ԱՄՆ-ում, ԳՖՀ-ում և այլ տեղերում ստեղծվել են «մարքսագետների», «սովետագետների» կենտրոններ, ինստիտուտներ, հրատարակվում են քրեստոմատիաներ, հանդեսներ։

Եթե լսենք այդ գործի կազմակերպիչներին, ապա այդ բոլորն արվում է որպես թե մարքսիզմ-լենինիզմն ավելի լավ ուսումնասիրելու, «լրացնելու»,

---

4 Տե՛ս Ալբերտ Նորդենի հոդվածը, «Новое время», 1969, № 15.

5 Տե՛ս «Известия», 19. XI. 1969, статья В. Борисова.

6 Այս մասին մանրամասն տե՛ս մեր «Проблема общественного прогресса в буржуазной философии истории» (Ереван, 1965) աշխատությունը։

«շտկելու» համար, բայց իրականում դա արվում է կոմունիզմի գաղափարները կեղծելու, վարկաբեկելու, հերքելու միտումով։ Դրանով է զբաղված տեսական-գաղափարախոսական դիվերսանտների մի ամբողջ բանակ։ Այստեղ մենք հանդիպում ենք մարքսիզմ-լենինիզմի, սովետական սիստեմի հին ու նոր «քննադատներին», բացահայտ բուրժուական հակառակորդների ու նրանց ռևիզիոնիստական զինակիցներին։ Այստեղ են փիլիսոփաներ, սոցիոլոգներ, պատմաբաններ, նախկին իդեալիստներ ու ներկա թեոլոգներ՝ Ժ. Բոխենսկի, Գ. Վետտեր, Հ. Ռաուխ, Ռ. Արոն, Կ. Պոպեր, Ռ. Լյովեթալ, Մ. Մակլյուեն, Հ. Մարկուզե, Ն. Բրաուն, Գ. Կան, Ու. Էբենշտայն, աջ ռևիզիոնիստներ՝ Գելիկ, Պետրովիչ, Պրուխա, Սվիտակ, Է. Ֆիշեր, Ֆ. Մարեկ, Ռ. Գարոդի և շատ ուրիշներ։

Սոցիալիստական սիստեմը ռազմական ճանապարհով խորտակելու ավանտյուրիստական փորձերի ձախողումները և մարքս-լենինյան գաղափարների հաղթարշավը մի կողմից, բուրժուական գաղափարախոսության սնանկացումը բոլոր գծերով՝ մյուս կողմից, ստիպում են բուրժուական իդեոլոգներին մի շարք ճշմարտություններ խոստովանել, միևնույն ժամանակ ուժեղացնելով իդեոլոգիական դիվերսիաները։ Առաջինն այդ ընդունեց (եթե շատ հեռուն չգնանք) ԱՄՆ-ի նախկին պետական քարտուղար Ջ. Ֆ. Դալլեսը. ԱՄՆ ունի ամեն ինչ՝ հարստություն, բարձր տեխնիկա, գործարարություն, բայց չունի մեծ իդեալներ, որոնք հրապուրեին ժողովուրդների մտքերն ու զգացմունքները,— խոստովանել է նա։

Նման խոստովանություններ այժմ կարելի է լսել շատ-շատերից և՛ իմպերիալիզմի բացահայտ երկրպագուներից, և՛ մարքսիզմ-լենինիզմի ավելի զգույշ ու ռեսպեկտաբել քննադատներից։ Կոմունիզմի իդեոլոգիան «մնում է որպես հզորագույն մի ուժ, որը գործում է այսօրվա աշխարհում»,— խոստովանում է ամերիկյան հակակոմունիստ Ա. Մեյերը[7]։

Ի՞նչ է հարկավոր հակադրել այդ ուժին։ Պատասխան. «Հարկավոր են ո՛չ թե ջրածնային նոր ռումբեր, ո՛չ թե ավելի ծավալուն ու ավելի արդյունավետ լրտեսական ցանց, ո՛չ թե ներքին անվտանգության ավելի խիստ օրենքներ, այլ հարկավոր է իդեա, կամ մեր սեփական իդեաների մի կոմպլեքս, որոնք ունենան ավելի շատ նշանակություն մեզ համար և աշխարհի մյուս ժողովուրդների համար, ներառյալ նաև այն ժողովուրդների, որոնք այժմ գտնվում են կոմունիստական աշխարհի ներսում»[8]։ Ասված է շատ պարզ. մարքսիզմ-լենինիզմի հետ ունեցած ճակատամարտերում բուրժուական գաղափարախոսությունը շարունակ պարտություն է կրում, և այժմ նրա կրողները որոնում են համոզման նոր ձևեր, նոր փաստարկներ։ Արևմտա-գերմանական «Ֆրանկֆուրտեր ալգեմայնե» թերթի 1968 թ. ապրիլի 24-ի համարում նշվում է, որ այժմ երկու սիստեմների մրցամարտում հսկայական նշանակություն է ստանում սեփական և ուրիշ ժողովուրդներին համոզելու արվեստը։

Ամերիկյան սոցիոլոգ Ու. Դիզարդը նույնպես շեշտը դնում է ուրիշներին համոզելու մեթոդների վրա։ «Մենք պետք է,— գրում է նա,— մեր ուշադրությունը կենտրոնացնենք ոչ թե տեխնիկայի վրա, այլ մի ավելի նշանակալից

---

[7] A. Meyet, Communism, 1967, № 4, p. 5.

[8] B. Ward, Wthitney, R. Strausz-Hupe, Ch. Malik, The Legacy of Imperiolism. Pttsburgh., 1960, p. 42.

սլոգանների վրա — այն բանի վրա, թե մենք ի՞նչ կարող ենք ասել օտարերկրացիներին համոզելու համար։ Համոզման մեր միջոցները պետք է որոշվեն մեր քաղաքականությամբ և համապատասխանեն նրան։ Այն, ինչ մենք անում ենք, և այն, ինչ մենք ասում ենք, չի կարելի անջատել միմյանցից»[9]։

Ինչպես տեսնում ենք, սրանք առանձին անհատների պատահական խոստովանություններ չեն, այլ գործ ունենք միջազգային երևույթի հետ։ Ի՞նչ է մնում անել բուրժուազիայի իդեոլոգներին այս բոլոր փաստերից հետո։ Պատասխանը հենց իրենք են տալիս. ոչ թե ձեռքերը ծալել կոմունիստական ու դեմոկրատական ուժերի հանդեպ, այլ որոնել քաղաքական ու գաղափարական դիվերսիաների ավելի ճկուն, ավելի խարդախ մեթոդներ, կազմակերպել իդեոլոգիական արշավանք կոմունիզմի դեմ։

Այդ խարդախություններից մեկն այն պրոպագանդիստական առասպելն է, թե մարքսիզմը մեր դարաշրջանում հնացել, սնանկացել է, թե մարքսիզմի ու լենինիզմի միջև սկզբունքային անհամաձայնություն գոյություն ունի։ Կոմունիզմի սովնական բմբոնումը, հայտարարում են կեղծարարները, ոչ մի ընդհանուր բան չունի Մարքսի ասածի հետ։ Արևմտա-գերմանական սոցիոլոգ Գյունտեր Վիկը Մարքսին իր հերթին «ուղղում» է հետևյալ կերպ. Մարքսը մոլորվել է, կապիտալի ծննդյան երկունքը համարելով նրա մերձմահու ցավեր, «մինչդեռ սոցիալիզմի իդեալներն արդեն իրականացվել են «համընդհանուր բարգավաճության պետության» մեջ[10]։ «Մարքսիզմը,— Վիկին կրկնելով է հայտնի ժուռնալիստ Ու. Լիպմանը, մոռանալով իր սովորական զգաստությունը,— մեռնող դոկտրինա է Ռուսաստանում։ Ընդ որում այս ժուռնալիստը վկայակոչում է «միասնական ինդուստրիալ հասարակության» վերաբերյալ իրոք առասպելը, որովհետև — ակա՞նջ դրեք — մարքսիստական «դոգման» անհամատեղելի է ժամանակակից բարձր ինդուստրիալ էկոնոմիկայի հետ, որպիսին ստեղծում է Սովետական Միությունը։ Այս փաստերի հետ միասին մենք գիտենք ուշադրության արժանի ավելի զգաստ խոստովանությունը։

Բոննի պրոֆեսոր Հ. Բարիոնը գրում է. «Մարքսիզմի կրախի վերաբերյալ դուշակությունները չիրականացան. ընդհակառակը, այն դարձավ համաշխարհային — պատմական ուժ։ Մարքսիզմի գաղափարները տիրեցին աշխարհին և այն աստիճան վերափոխեցին աշխարհը, որ անհնար էր կանխատեսել»[11]։

Հակակոմունիստ Հարրի Շվարցը տրտնջում է. «Պատմությունն արդեն ցույց է տվել, որ ոչ մի հերքում ի վիճակի չէ խարխլելու մարքսիզմի ազդեցությունը։ Դրա պատճառն այն է, որ մարքսիզմն այժմ հարյուրավոր միլիոն մարդկանց համար դարձել է մի գաղափարախոսություն, որը նրանց ցույց է տալիս դեպի լավագույն ապագան տանող ուղին։ Մարքսիզմի համաշխարհային հեղինակությունն աճում է»[12]։ Նշանակալից է նաև ֆրանսիական մտածող Շոպարի խոստովանությունը. «Ներկայումս պարզապես անհնարին է հասկանալ

---

[9] W. Dizard, The Strategy of Truth. Washington. 1961, p. 19.

[10] Günter Wick. Wandlungen des Marxismus. München, 1963, S. 15.

[11] J. Barion. Ideologie, Wissesnchaft, Philosophie, Bonn, 1966. S. 95.

[12] Marx on Economics, Edited by Robert Freedman. Introduction by Harry Schwartz, 1961, № 4. p. XXIII.

մեր դարաշրջանը կամ անցյալ քաղաքականությունների պատմությունը. առանց հաշվի առնելու Մարքսի դոկտրինան»[13]։

Արևմտա-գերմանական հասարակական գործիչ Վ. Շենկեն ևս նշում է ոչ միայն մարքսիզմի գիտական ուժը, այլև նրա բարոյական մեծագույն նշանակությունը։ «Ահա հարյուր տարուց ավելի է,— գրում է նա,— ինչ մարքսիզմը հանդիսանում է խղճի այն ձայնը, որը թույլ չի տալիս արևմտյան կապիտալիստական աշխարհին ամբողջությամբ ընկղմվելու մարդու համար վիրավորական ու անխիղճ էգոիզմի ճահիճը։ Մարքսիզմն այն ուժն է, որի հանդեպ գալը արթնացրեց խիղճը և թույլ չի տալիս, որ նա խամրի»[14]։ Այսպիսի խոստովանություններ շատ կարելի է արձանագրել։

Հասարակական-պատմական այս ֆոնի վրա իր ամբողջ ուժով ու վեհությամբ ահա վեր է խոյանում Վ. Ի. Լենինի ամենահաղթ ուսմունքը։

«Մեր կուսակցության ու ժողովրդի բոլոր մեծագործությունները ոգեշնչված են լենինյան գաղափարներով, որոնք միշտ սլացած են դեպի առաջ. դեպի ապագան»[15]։

Լենինը Մարքսի և Էնգելսի հեղափոխական մտքի ու հեղափոխական գործի հանճարեղ շարունակողն ու զարգացնողն է։ Անհատակ օվկիանոս է լենինյան գաղափարական-տեսական ժառանգությունը։ Այնտեղ բացահայտված են սոցիալիստական հեղափոխությունների, սոցիալիզմի ծագման ու զարգացման, կոմունիզմի շինարարության օրինաչափությունները։ Անգնահատելի գանձ է բուրժուական փիլիսոփայության նորագույն հոսանքների և ռևիզիոնիզմի լենինյան քննադատությունը։ Վ. Ի. Լենինի տեսական ժառանգության շտեմարանում վճռական տեղը հատկացված է մարքսիստական դիալեկտիկա-մատերիալիստական մեթոդին, որն, ըստ Լենինի, ամբողջ մարքսիզմի արմատական տեսական հիմքն է, նրա հեղափոխական հոգին։

Թե ինչ տեղ է գրավում դիալեկտիկան մարքս-լենինյան տեսության սիստեմում, կարելի է պատկերացնել Լենինի հետևյալ խորիմաստ ձևակերպումից. «Եթե փորձ անենք մի խոսքով սահմանելու ամբողջ նամակագրության (խոսքը Մարքսի և Էնգելսի նամակագրության մասին է —Հ. Ա.), այսպես ասած, կիզակետը,— այն կենտրոնակետը, որին հանգում է արտահայտվող և քննարկվող գաղափարների ամբողջ ցանցը, ապա այդ խոսքը կլինի դիալեկտիկան։ Մատերիալիստական դիալեկտիկայի կիրառումը ամբողջ քաղաքատնտեսության վերամշակման նկատմամբ սկսած նրա հիմքից—պատմության, բնագիտության, փիլիսոփայության, բանվոր դասակարգի քաղաքականության ու տակտիկայի նկատմամբ,— ահա ինչն է ամենից շատ հետաքրքրում Մարքսին ու Էնգելսին, ահա ինչի մեջ են նրանք մտցնում ամենից էականն ու ամենից նորը, ահա ինչումն է նրանց հանճարեղ առաջաքայլը հեղափոխական մտքի պատմության մեջ»[16]։

Լենինը դիալեկտիկայի մեծագույն վարպետն էր և տվել է կյանքում այն կիրառելու անգերազանցելի օրինակներ։ Բոլոր օպորտունիստների և ռևիզիոնիստների հանցանքը նա համարում էր մարքսիզմի հեղափոխական դիալեկ-

---

[13] Chopand E. Mission l'esprit dans noire civilisation techique. Neuchatel, 1960, p. 57.

[14] Տե՛ս «Известия», 26. VIII, 1969. Л. Толкунов, «Духовное обнищание» հոդվածը։

[15] Տե՛ս «Правда», 21. I. 1969, առաջնորդող հոդվածը։

[16] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 19, էջ 694—695։

տիկայի անտեսումը կամ աղավաղումը։ Պատմությունը ցույց է տալիս, թե ինչ է ստացվում, երբ ռեֆորմիստները, աջ և «ձախ» ռեվիզիոնիստները փորձում են աղավաղել այդ ուսմունքը, թուլացնել նրա ուժը և խարխլել նրա ամբողջականությունը, որպես միասնական ինտերնացիոնալ ուսմունքի։ Լենինը սովորեցնում էր աչքի լույսի պես պահպանել մարքսիստական տեսության մաքրությունը, հետևողական ու անհաշտ պայքար մղել բուրժուական իդեալոգիայի ու օպորտունիզմի ամեն տեսակի դրսևորումների դեմ, զարգացնել ժողովրդի մեջ կոմունիստական համոզվածությունն ու դաղափարական տոկունությունը։

Մեծ առաջնորդի գրվածքներում ընդգծվում է մարքսիզմի ամենաբնորոշ, ամենավճռական առանձնահատկությունը՝ խորը գիտականությունն ու մեծագույն հեղափոխականությունը, այսինքն օբյեկտիվ ճշմարտացիությունն ու հետևողական կուսակցականությունը։ Կոմունիստական գաղափարախոսության այդ երկու կողմերը՝ գիտական միտքն ու հեղափոխական գործողությունն անխզելիորեն կապված են իրար հետ, բխում են մեկը մյուսից, փոխադարձաբար ներթափանցում են։ Մարքսի ուսմունքը ամենազոր է, ասում է Լենինը, որովհետև ճշմարտացի է, իսկ ճշմարտացի է, որովհետև, խորը, բազմակողմանի ու ճիշտ է արտացոլում օբյեկտիվ իրականությունն իր օրինաչափ զարգացման ընթացքով, և դա համընկնում է հասարակական պրոգրեսի, աշխատավոր մարդկության շահերի, նպատակների ու պահանջների հետ։

Լենինիզմի բովանդակության խորությունն ու հարստությունը, անդիմադրելի ուժն ու աշխարհափոխիչ նշանակությունը ստիպված են բազմիցս խոստովանել նույնիսկ նրա քննադատներն ու հակառակորդները։ Ահա բազմաթիվ օրինակներից մի քանիսը։ «Ոչ մի մարդ երբեք ավելին չի արել, քան Լենինը Ռուսաստանի և աշխարհի կերպարանքը փոխելու գործում»։ Այս ասում է ամերիկյան հակակոմունիստ Ռորերտ Մեյնը։ Անգլիական պրոֆեսոր Լեոնարդ Շապիրոն գրում է. «Լենինի անձնական ազդեցությունն իր սեփական երկրում և ամբողջ աշխարհում անչափ ավելին է, քան մեր հարյուրամյակի որևէ այլ գործիչի ազդեցությունը»։ Լենինը սովորեցնում էր դաղափարախոսական հարցերում հետևողականորեն կիրառել մարքսիստական կուսակցականության (իսկ դա նշանակում է նաև խիստ գիտական) սկզբունքը։ Այդ նշանակում է նաև հակառակորդների փիլիսոփայական, բարոյագիտական, քաղաքական, ծրագրային կոնցեպցիաների, սիստեմների, դեկլարացիաների հետևը տեսնել նրանց դասակարգային իմաստն ու տենդենցները։ Օրինակ, բուրժուական փիլիսոփաների նկատմամբ Լենինը սովորեցնում էր, որ նրանցից «ոչ մեկի ոչ մի խոսքին չի կարելի ճավատալ, հենց որ խոսք է բացվում փիլիսոփայության մասին»[17]։ Նույնը վերաբերում է հասարակական մտքի բոլոր բնագավառներին, սոցիալ-պատմական բոլոր գիտելիքներին։ «Մոտակա հիսուն տարում,— գառնությամբ արձանագրում է բուրժուական սոցիոլոգ Ջ. Կեթլին,— ամբողջ աշխարհը կդառնա լենինյան»։ Անկասկած, սրտի կսկիծով է գրում իր հետևյալ տողերը արեմտա-գերմանական հակակոմունիստ Ի. Ֆետշերը. «Ժամանակակից մարքսիզմ-լենինիզմն այժմ ամենաազդեցիկ գաղափարախոսությունն է»։

Հարկադրված տուրք տալով մարքսիզմ-լենինիզմին, նրա քննադատները փորձում են նենգամտորեն այլանդակել այն. Մարքսին հակադրում են Լենինին, ուշ Մարքսին՝ վաղ Մարքսին, լենինյան գաղափարների մի էտապը՝ մյուս էտա-

17 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 14, էջ 459։

պին, հույս են դնում կոմունիստական գաղափարախոսության էռոզիայի վրա, խոսում են պլյուրալիստական մարքսիզմի մասին և այլն։

Հասարակության սոցիալիստական վերափոխումների այս դարաշրջանում, երբ հարյուրավոր միլիոն հասարակ մարդիկ ամենուրեք մարտնչում են սոցիալական առաջադիմության, դեմոկրատիայի, խաղաղության, ազգերի անկախության համար, բուրժուական հոգևոր կուլտուրան ղրան հակառակ, խորը ճգնաժամ է ապրում։ Սոցիալական հոռետեսություն, նիհիլիզմ, իռացիոնալիզմ, թեոլոգիա, ռասիզմ, նացիոնալիզմ,— ահա ինչ է համակում իմպերիալիզմի հասարակական միտքը և ինչ են սերմանում հակակոմունիզմի զինակիցներն իրենց երկրներում փորձելով նույնը ներարկել սոցիալիզմի երկրները։

Մոլեռանդ ռևանշիստ Յոզեֆ Շտրաուսը բուրժուական մտածելակերպը բոլոր միջոցներով կոմունիստական պետությունների հասարակական կյանքի մեջ ներմուծելու մասին արդեն բերված իր խոսքերից հետո գրում է «Մարդկանց մեջ պետք է ամեն կերպ զարգացնել անտարբեր վերաբերմունք այդ երկրների կոմունիստական ղեկավարության նպատակների նկատմամբ, նրանց բնակչությունը մղելով դեպի պասսիվ դիմադրություն, դեպի սաբոտաժ»[18]։ Հայտնի էքզիստենցիալիստ Կարլ Յասպերսը մռայլ գույներով նկարագրելով պատմության ընթացքը, հետևյալ մտահանգման է գալիս. «Համաշխարհային պատմությունը պատահականությունների քաոսի, մակընթացության հորձանուտի կերպարանք ունի։ Այն ավելի ու ավելի է սաստկանում գնալով մի կազմալուծումից դեպի մյուսը, մի աղետից դեպի մյուսը, ունենալով երջանկության վաղանցիկ առկայծումներ, կղզիկներ, որոնց առժամանակ հեղեղը չի դիպչում, մինչև որ նրանք էլ ջրի տակ կանցնեն»[19]։

Ձավեշտականն այն է, որ հետևողականորեն պրոպագանդելով այս ռեակցիոն գաղափարախոսությունը, մարքսիզմ-լենինիզմի մոլեռանդ հակառակորդներն իրենց դիտավորությունները քողարկելու համար առաջ են քաշում այսպես կոչված «գաղափարախոսական զինաթափում» (հակաիդեոլոգիացում), ամբողջապես կեղծ թեզը և դա արվում է բուն «գաղափարախոսություն» (իդեոլոգիա) հասկացության դեմ արշավանք կազմակերպելու միջոցով, արվում է ամենից առաջ Մարքսի ու Լենինի գաղափարների ազդեցությունը թուլացնելու, կոմունիզմի նվաճումներն ու իդեալը վարկաբեկելու համար։ «Հակաիդեոլոգիզմի» այդ հիմնական տենդենցը չեն թաքցնում հենց նրա կողմնակիցները և մարքսիզմ-լենինիզմի հետ կապ չունեցող շատ ուրիշ հեղինակներ։ «Հասել է իդեոլոգիական դարաշրջանի վերջը» — այս դրույթը հիմա շատ մոդայական է արևմուտքի բուրժուական պրոպագանդիստների շրջանում։ Այկեն Դեվիթն, օրինակ, «Ապստամբություն իդեոլոգիայի դեմ» վերնագիրը կրող իր հոդվածում նշելով այդպիսի ապստամբության երեք էտապ, բանը հանգեցնում է նրան, թե առաջին ապստամբը իդեոլոգիայի դեմ ընդհանրապես՝ Մարքսն է եղել։ Դա արվում է Մարքսի վաղ աշխատությունների և մարքսիստական ուսմունքի աղավաղման միջոցով[20]։

Լենինը սովորեցնում է երկու գաղափարախոսությունների — կոմունիզմի ու հակակոմունիզմի հակադիր փիլիսոփայական, սոցիալ-քաղաքական կոնցեպցիաների ու սիստեմների անհաշտ պայքարի մասին։

---

18 Տե՛ս Ալբերտ Նորդեն հոդվածը «Новое время» շաբաթաթերթում, 1969, № 15։

19 K. Jaspers, Von Ursprung und Ziel der Geschichte. Münehen, 1949, S. 299.

20 Aiken David, The Revolt Against Ideology. „Commentary", April, 1964.

Այստեղից պարզ է այդ երկու գաղափարախոսությունների անտագոնիստական բնույթը։ Չեն կարող իրար հետ հաշտ գոյակցել մատերիալիզմն ու իդեալիզմը, դիալեկտիկան ու մետաֆիզիկան, հումանիզմն ու մարգատյացությունը, կոլեկտիվիզմն ու ինդիվիդուալիզմը, լավատեսությունն ու պեսիմիզմը։ Ահա թե ինչու Վ. Ի. Լենինը լիակատար հիմք ուներ պնդելու. «Հարցը դրվում է միայն այսպես. բուրժուակա՞ն, թե սոցիալիստական իդեոլոգիա։ Միջինը չկա այստեղ... Ուստի սոցիալիստական իդեոլոգիայի ամեն մի նվաստացում, ամեն մի հեռացում նրանից՝ ինքնին նշանակում է բուրժուական իդեոլոգիայի ուժեղացում»[21]։

Ակնհայտ է, թե գիտական-տեսական, մեթոդոլոգիական ինչ հարստություն է պարունակում լենինիզմը, քաղաքական պայքարի ինչ հատու զենք է կոմունիստական ու բանվորական շարժման, բոլոր պրոգրեսիվ ուժերի համար։ Գնալով ավելի լայնածավալ է դրսևորվում լենինիզմի ամենահաղթ ուժը։ Հարբստացնելով լենինյան գաղափարները, միևնույն ժամանակ պետք է սիստեմատիկարար մերկացնել հակակոմունիզմի հակագիտական, կեղծ կոնցեպցիաներն ու հայացքները, նրա ռեակցիոն քաղաքական տենդենցները, աչքի լույսի պես պահպանել մարքսիզմ-լենինիզմի մաքրությունը, մշտապես հիշելով, որ միայն այս ուսմունքն է տալիս մեզ նպատակի պարզություն, հաստատուն համոզմունք, կոմունիստական պրոգրեսի հաղթանակի նկատմամբ անհողդողդ վստահություն ու հավատ։

СОВРЕМЕННАЯ ИДЕОЛОГИЧЕСКАЯ БОРЬБА И ЛЕНИНИЗМ

Г. Г. АСЛАНЯН
Доктор философских наук

Резюме

В статье на широкой основе политического и идеологического материала обрисована картина современной идеологической борьбы между коммунизмом и антикоммунизмом, прогрессивными и реакционными силами нашей эпохи. Выясняются основные причины обострения идеологической борьбы, характеризуется поход империалистической реакции против международного коммунизма и его идеологии, носящий всеохватывающий, поистине глобальный характер, вскрываются приемы, методы, цели идеологических диверсий империалистов.

На фоне всемирно-исторических событий возвышается величайшая фигура В И. Ленина, верного продолжателя революционной мысли и революционного дела Маркса и Энгельса. В статье подчеркивается величайшее богатство и глубина ленинского идейного наследия, все более раскрывающегося в нашу эпоху перед человечеством. Ленинизм — знамя нашего века, мощное орудие исторического прогресса. Святой долг марксистов-ленинцев — творчески овладевать этим всепобеждающим оружием, оберегать чистоту марксистко-ленинских идей от искажений, опошлений, фальсификаций.

---

21 Վ. Ի. Լենին, երկեր, հ. 5, էջ 507։